# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Դեկտեմբերի 4-ին, կիրակի. - Բ. կիր. Յիսնակաց:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Շահե աբեղա Անանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Դեկտեմբերի 9-ին, ուրբաթ. - Յղութիւն Սուրբ Աստուածածնի յԱննայէ:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովնան աբեղա Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Դեկտեմբերի 11-ին, կիրակի. - Գ. կիր. Յիսնակաց:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովակիմ աբեղա Մանուկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ նվիրված երկրաշարժի զոհերի հիշատակին:

**Դեկտեմբերի 18-ին, կիրակի. - Դ. կիր. Յիսնակաց:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց, Տ. Իսահակ աբեղա Պողոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ Արմեն Սարգսյանի մոր՝ փիկին Ժենյայի հոգու հանգստության և Սարգսյան գերդաստանի հին և նոր ննջեցյալների համար:

**Դեկտեմբերի 25-ին, կիրակի. - Ե. կիր. Յիսնակաց:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ռուբեն աբեղա Զարգարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ամենայն որ բարձրացուցանէ զանձն իւր՝ խոնարհեսցի. եւ որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի» (Ղուկ. ԺԸ 14) բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ նվիրված Գարեգին Նժդեհի մահվան 50-ամյակին:

**Դեկտեմբերի 26-ին, երկուշաբթի. - Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային եւ առաջին մարտիրոսին:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ղուկաս աբեղա Զաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց: